

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱՂՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ծ. Ժ. ԱՍԱՏՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների բնկնածու, ԳՊՀ դասախու

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրումը, ինչպես նաև հարափոխիս աշխատաշուկան բուհական համակարգից այսօր պահանջում են այնպիսի մասնագետներ, որոնք կարող են արդյունավետ աշխատանք դրականացնել արագ փոփոխվող շուկայի պայմաններում՝ ցուցաբերելով ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պատրաստակամություն։ Բուհի շրջանավարտներին ներկայացվող այս պահանջներն իրենց հերթին նորանոր խնդիրներ են առաջադրում բուհի պրոֆեսորադասախոսական կազմին։ Ի թիվս կրթության ավանդական պահանջների ու նպատակների՝ դասախոսի առջև դրվել են նաև սովորողների մեջ քննադատական և վերլուծական մտածողություն, միջանձնային հաղորդակցական հնտություններ, ապագա նաև նախագիտության նկատմանը ստեղծագործական մոտեցումներ ձևավորելու և այլ պահանջներ, ինչից էլ, որպես հետևանք, բխում են դասախոսների նաև ազգային համապատասխան հրագեկությունների ձևավորման և զարգացման առաջնահերթությունները։

Ն. Վ. Շեստակը, անդրադառնալով մասնագիտական որակների հարցին, իրազեկություն (կոմպետենցիա) եզրույթը ձևակերպում է որպես մասնագետին բնորոշ այնպիսի առանձնահատկությունների հանրագումար, որը խարսխված է ինացության, փորձի և հրավիճակին ու նպատակներին համապատասխան գործունեություն ծավալելու կարողությունների միասնության վրա։

Որքանո՞վ է արդիական մանկավարժական կազմների կատարելագործման խնդիրն այսօր, և կրթության որակի ապահովման գործում ո՞ր նպատակների իրազեկությանը կարող է ծառայել այն։

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական իրազեկությունների գորգացման ծիշտ կազմակերպումն առաջին հերթին նպաստավոր է դասախոսական կազմի և բուհի դեկավարության միջև սերտ և արդյունավետ համագործակցության տեսանկյունից։ Ինչպես հայտնի է, բուհական համակարգում վերջին տարիներին մեծ տարածում է գտել դասախոսի գործունեության գնահատման պրակտիկան։ Դնարավորինս օբյեկտիվ գնահատում իրականացնելու գործում նույնպես կարևոր է դասախոսների նաև ազգային համապատասխան որակների մոդելավորումը։ Նախնական անհրաժեշտ է՝

1. հստակեցնել մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները,
2. նկարագրել և ապահովել դասախոսի մասնագիտական իրազեկությունների դրսևորման համար անհրաժեշտ պայմանները,

3. սահմանել այն մակարդակները, որոնց պետք է գտնի համապատասխանել դասախոսն իր գործունեության ընթացքում։

Թվարկված հստակեցումներից ու ծշգրտումներից հետո արդեն հնարավոր կլինի որոշել, թե արդյոք կատարված աշխատանքը որքանո՞վ է համապատասխանում այդ պահանջներին, ի՞նչն է խոչընդոտում այդ համապատասխանությանը, ի՞նչ պահանջներներ ունի դասախոսական կազմը և այլն։ Իսկ բուհի վար-

չակազմը կունենա նաև դասախոսական գործունեության համար առավել հարմար կադրեր ընտրելու հնարավորություն:

Բացի վերոնշյալից, դասախոսների մասնագիտական իրազեկությունների կատարելագործումը միտված է նաև դասախոսների ատեստավորումն ու նրանց աշխատանքի խրախուսման մեխանիզմներն առավել կատարյալ դարձնելուն:

Բուհի մանկավարժական կադրերի մասնագիտական իրազեկությունների կատարելագործումը մեծապես նպաստում է նաև բուհի հեղինակության բարձրացմանը, քանի որ ,այս դեպքում համալսարանն ստանում է հնարավորություններ, որոնք թույլ են տալիս գործատուներին և ընդհանրապես հասարակությանը պարզորոշ ցույց տալ, թե շրջանավարտների մեջ ինչպիսի իրազեկություններ է ձգտում ապահովել բուհը և համապատասխանաբար ինչպիսի պահանջներ է առաջադրում իր դասախոսական կազմին: Եվ վերջապես, ինչպես իրավացիորեն նշել է Յ. Պետրոսյանը՝ «Մասնագիտական իրազեկություններն ու դրանց ձևավորումն էլ հանդիսանում են կրթության ,որակի նշանը, ուսումնական հաստատության դասը և կարգավիճակը, դրա իրական վարկանիշի ձևավորման հիմքը»:

Մասնագիտական գործականության մեջ հանդիպում են դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող ամենատարբեր պահանջներ և դրանց հիման վրա կատարվող իրազեկությունների տարաբնույթ դասակարգումներ: Ուստանակավարժ Ի.Ա.Զիմնյայան, իր աշխատության էջերում լայնորեն անդրադառնուլով դեռևս 1990-ական թվականներին Ի. Վ. Կուզմինայի և Ա. Կ. Մարկովայի կողմից կատարված դասակարգմանը, առաջադրում է դասակարգման իր տարրերակը՝ առաձնացնելով իրազեկությունների երեք հիմնական խումբ: «1. մարդուն՝ որպես գործունեության սուբյեկտի, որպես անհատականությանը բնութագրող, 2. նրա՝ այլ անձանց հետ ունեցած փոխգործակցությանը վերաբերող, 3. ընդհանրապես մարդու գործունեության բոլոր ձևերին և ոլորտներին վերաբերող»: Այս երեք խմբերում Ի. Ա. Զիմնյայան գետեղում է ընդամենը տասը իրազեկություններ՝ առաջինում՝ անձի առողջապահությանը, արժեհամակարգին, ինտեգրացմանը, քաղաքացիական նկարագրին, հնքնակատարելագործմանն ու ինքնակառավարմանը վերաբերող, երկրորդում՝ սոցիալական գործունեությանը և հաղորդակցմանը վերաբերող, երրորդում՝ ճանաչողական գործունեությանը և գործունեության այլ ձևերին, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաներին վերաբերող:

Չայ մանկավարժները, անդրադառնալով դասավանդողի անձնային և մասնագիտական որակների մոդելավորման հարցին, առանձնացրել են մանկավարժական հետևյալ գործառույթները՝ նպատակադրումն, կառուցողական, ուսուցանող, տեղեկատվական, կազմակերպչական, հաղորդակցական, հետազոտական, հոլովական, գնահատող՝ այս ամենին զուգահեռելով նաև անձնային և մասնագիտական որակների ձևավորման հիմնական հոգեբանամանկավարժական գործուներն ու պայմանները:

Ուստանակավարժներն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում հաստիական կադրերի գիտահետազոտական իրազեկություններին՝ դրան զուգահեռ շեշտելով նաև հաղորդակցական կարողությունների, մասնավորապես գիտական խոսքի մշակությին տիրապետելու անհրաժեշտությունը՝ որպես գիտական

գործունեություն իրականացնելու կարևորագույն նախապայման: Ոուս մանկավարժ Ա. Վ. Բարաբանշիկովը պայմանականորեն առանձնացրել է դասախոսների երեք տիպ՝ դասախոսներ, որոնց գործունեության մեջ տիրապետող է մանկավարժական ուղղվածությունը (այս դասախոսները կազմել են ընդհանուր թվի 2/5-ը), դասախոսներ, որոնց գործունեության մեջ տիրապետող է գիտահետազոտական ուղղվածությունը (այս դասախոսները կազմել են շուրջ 1/5 մասը) և դասախոսներ, որոնք հավասարապես ուշադրություն են դարձնում երկուսին էլ (ըստ Բարաբանշիկովի՝ այս դասախոսները գերակշիռ մաս են կազմել): Գիտահետազոտական գործունեությամբ զբաղվելը, ինչ խոսք, բարձրացնում է դասերի գիտական մակարդակը, սակայն մանկավարժական հմտությունն էլ իր հերթին օգնում է լուծել դասախոսի առջև ծառացած այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ սովորողների պահանջմունքների բացահայտումը և ընթունումը, լսարանի հետաքրքրությունների ընդլայնումը, ուսանողների հետ աշխատելու նոր սկզբունքների որդեգրումը և այլն:

Նմանօրինակ խնդիրների լուծումն իր հերթին պահանջում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի դասավանդման մեթոդների ու մոտեցումների նորացում. ավանդական, դասական մոտեցումից բացի, պահանջվում է նաև ուսումնառության գործընթացն ակտիվացնող մեթոդների կիրառություն: Դասախոսը պետք է կարողանա ստեղծել բարոյահոգեբանական նպաստավոր մթնոլորտ՝ սովորողների միջև համագործակցային փոխհարաբերությունների զարգացման, ուսուցման գործընթացին նրանց ակտիվ մասնակցությունը և անձնական դրդապատճառները զարգացնելու համար: Առանձնահատուկ ուշադրության են արժանի նաև դասախոսներին ներկայացվող համակարգչային գրագիտության, համացանցից օգտվելու, ինչպես նաև ուսուցման տեխնիկական միջոցները կիրառելու պահանջները:

Հար և նման պահանջներից էլ բխում է դասախոսների մանկավարժական իրազեկությունների կատարելագործման խնդիրը՝ իր հերթին առաջ քաշելով մանկավարժական կադրերի վերապատրաստման, որակավորման և վերարակավորման անհրաժեշտությունը:

Մասնագիտական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվում նաև մանկավարժական կադրերի անձնային որակներին: Բացի ուսուցման գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ որակները նշելուց՝ մասնագետները ներկայացնում են նաև անձնային այն որակները, որոնք «հակացուցված են» մանկավարժական կադրերին: Ա. Արնաուտյանը, վերլուծելով «մարդ-մարդ» սիենայով աշխատող անձանց մասնագիտական որակները, գրում է. «Տվյալ տիպի մասնագիտական գործունեության համար հակացուցված են խոսքային թերությունները, անարտահայտիչ խոսքը, ներանփոփ, փակ և չշփվող պահվածքը, ավելորդ դանդաղկոտությունը, անշահախնդիր հետաքրքրության բացակայությունը և անտարբերությունը մարդկանց նկատմամբ»: Իսկ որպես կարևորագույն որակներ՝ առանձնացնում է «մասնագիտական իրազեկությունը և դիդակտիկական կուլտուրան»:

Յիմք ընդունելով մասնագիտական գրականության մեջ կատարված տարաբնույթ դասակարգումները՝ փորձենք ներկայացնել մանկավարժական կադրերի հետևյալ իրազեկությունները՝ հնարավորինս իրատեսական պահանջներով.

Մասնագիտական՝

- առարկայի խոր իմացություն, գիտելիքներ, կարողություններ, հմտություններ,

- առարկայի շրջանակներում գիտության վերջին նվաճումների մասին տեղեկացվածություն,

- առարկայական չափորոշիչների ու ծրագրերի իմացություն:

Անձնային՝

- տարբեր իրավիճակներում ինքնադրսնորվելու և ինքնակառավարվելու կարողություն,

- ուսումնական գործնթացում հնարավոր պրոբլեմային իրավիճակները հարթելու կարողություն,

- ուսումնառողջների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և էթիկայի նորմեր ձևավորելու կարողություն,

- ուսումնառողջների ներուժի գնահատում,

- լսարանին համոզելու կարողություն:

Մանկավարժական՝

- մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կիրառում,

- գործող օրենսդրական փաստաթղթերի իմացություն (ՀՀ Սահմանադրություն, Աշխատանքային օրենսգիրք, Բարձրագույն և հետքուհական կրթության մասին օրենք և այլն),

- ուսանողների քննադատական մտածողության զարգացում, ուսումնառողջների հետ իրենց ուժեղ և բույլ կողմերը վերլուծելու կարողություն,

- ուսուցման գործնթացում ինչպես մարդկային, այնպես էլ նյութական ռեսուրսների ուսումնասիրություն և վերլուծություն անելու կարողություն,

- դասապրոցեսը սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան կառուցելու կարողություն,

- սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու կարողություն,

- մանկավարժական տարբեր մեթոդների, հնարների, եղանակների համադրում,

- անհատական և խմբային աշխատանքի կազմակերպում ինչպես լսարանային, այնպես արտալսարանային գործունեություն իրականացնելիս,

- սովորողների ուսուցուղական-ճանաչողական գործունեության խթանում,

- ուսումնառողջների սովորելու կայուն դրդպատճառների ձևավորում և խթանում:

Գիտահետազոտական՝

- հետազոտական նախագծերում ընդգրկվելու պատրաստակամություն,

- գիտական աշխատանքներ իրատարակելու հմտություններ,

- մասնակցություն գիտաժողովներին,

- ուսանողների հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ:

Կազմակերպչական՝

- բանավեճեր, քննարկումներ կազմակերպելու կարողություն,

- ուսանողների ակտիվությունը խթանելու կարողություն,
- լարորատոր աշխատանքներ, անհատական խորհրդատվություն, դիպլոմային և կուրսային աշխատանքներ, արտադրական պրակտիկա կազմակերպելու և դեկավարելու կարողություն:

Հաղորդակցական՝

- խոսքի բարձր մշակույթի դրսևորում, ինչպես նաև խոսքի կատարելագործման ձգուուն,
- միջանձնային հարաբերությունների պայմանական մեխանիզմների ձևավորում դասախոսի կողմից՝ հստակ մշակված խոսք, պահանջների և առաջադրանքների հստակ ձևակերպում, հիմնադրույթների հակիրճ ձևակերպում,
- օտար լեզուների իմացություն,
- օտար լեզուներով մասնագիտական գրականությունից օգտվելու կարողություն:

Ակնհայտ է, որ դասախոսների մասնագիտական իրազեկությունների կատարելագործումը և բուհի զարգացման գործընթացները փոխկապակցված են, ուստի իրազեկությունների զարգացման ծրագրերը պետք է խարսխված լինեն բարձրագույն ուսումնական հաստատություններին ներկայացվող և նրանցից բխող պահանջների վերլուծության և հաշվառման վրա, այլապես կդառնան ինքնանպատակ: Այս պահանջների հաշվառումով իրականացվող մասնագիտական իրազեկությունների կատարելագործմանը բուհերուն հնարավոր է ներդնել դասախոսական անձնակազմի որակի բարձրացման համակարգ՝ կրթության կազմակերպման նորացվող բովանդակության ու պահանջներին, ինչպես նաև մանկավարժական տեխնոլոգիաների զարգացմանը և աշխատաշուկայի պահանջներին համահունչ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Արնաուլյան Ա.**, Ուսուցիչը որպես մանկավարժական հաղորդակցության և շփումների սուբյեկտ, Նախաշավիդ, 2009, N 5:
2. **Պետրոսյան Յ.**, Մասնագիտական իրազեկությունների ձևավորումը որպես կառավարման խնդիր: Սանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ. միջբուհական կոնսորցիոնի գիտական հանդես, 2009, N 1:
3. Ուսուցիչների վերապատրաստման կատարելագործումը. ձեռնարկ ուսուցիչների վերապատրաստման համար, Այրեքս, Երևան, 2003, էջ 97:
4. **Астанина С. Ю., Шестак Н. В., Чмыкова Е. В.**, Конференции как метод формирования научно-исследовательской компетентности в процессе обучения в вузе. Труды СГА, 2012, N 7.
5. **Баравашников А. В.**, Проблемы педагогической культуры преподавателей вузов, Советская педагогика, 1981, N 1.
6. **Дульzon А. А., Васильева О. М.** Модель компетенций преподавателя вуза. Журнал "Университетское управление: практика и анализ", 2009, N 2.
7. **Зимняя И. А.**, Ключевые компетентности как результативно-целевая основа компетентностного подхода в образовании, Москва, 2004.
8. **Шестак Н. В.**, Компетентностный подход в дополнительном профессиональном образовании. "Высшее образование в России", 2009, N 3.

ПРОБЛЕМА ПОВЫШЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОЙ КОМПЕТЕНТНОСТИ ПЕДАГОГИЧЕСКОГО СОСТАВА В СИСТЕМЕ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ

Д. Ж. АСАТРЯН

В статье представлена проблема совершенствования профессиональной компетентности преподавателей в качестве важнейшего условия обеспечения качества образования. Автор статьи представил краткий очерк точек зрения различных специалистов в литературе, связанных с профессиональным моделированием преподавательского состава, пытаясь организовать и уточнить требования, предъявляемые преподавательскому составу университета, и профессиональную компетентность, обусловленную этими требованиями.

PROBLEM OF INCREASING PEDAGOGICAL PROBLEM OF INCREASING PEDAGOGICAL STAFF PROFESSIONAL COMPETENCES OF THE SYSTEM OF HIGHER EDUCATION

Ts. Zh. ASATRYAN

The article touches upon the issue of improving lecturers' professional competences as an important prerequisite of education quality assurance. The author of the article briefly touches upon viewpoints of different specialists related to pedagogical staff professional modelling trying to organize and clarify requirements for university professors and professional competences derived from these requirements.

ԴԱՐԱՄԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ ՈՐՈՇՉԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ս. Կ. ԽԱՆԴԱՆՅԱՆ
ԳՊԴ դասախոս

Դայտնի է, որ հարաբերական ածականներն արտահայտում են ոչ անմիջական, միջնորդավորված հատկանիշ, ինչպես՝ ուսանողական, բրդյա, գիշերային և այլն: Այստեղ հատկանիշն արտահայտված է առարկայական հարաբերությամբ: Բայց կան մի շարք ածականներ, որոնց մեջ հատկանիշն արտահայտվում է գործողության հետ ունեցած հարաբերությամբ, ինչպես՝ սիրելի, ատելի, գովելի, զգայուն, դյուրիչ և այլն: Այս տիպի ածականների մեջ ևս հարաբերություն է արտահայտվում, «...միայն գործողության հետ ունեցած հարաբերություն: Բայց այն բանի շնորհիվ, որ գործողությունն ինքը հատկանիշի դրսնորումներից մեկն է, բայակազմ ածականների մեջ, որպես կանոն, հարաբերության նշանակությունը գերիշխող ու հիմնական չէ, և վերջիններս մոտենում են սովորական որակական ածականներին: Ուստի և, ըստ երևույթին, հարաբե-